ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ

1. Անուն(ներ)ը, Ազգանուն(ներ)ը

Վահրամ Դումանյան

Ժաննա Անդրեասյան

2. Զբաղեցրած պաշտոն(ներ)ը

ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարար

ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարի տեղակալ

3. Գործուղման վայրը և ժամկետները

Մեծ Բրիտանիայի և Հյուսիսային Իռլանդիայի Միացյալ Թագավորություն

2022թ. մայիսի 22-ից 26-ը

4. Հրավիրող կողմը

Բրիտանական խորհուրդ

5.Գործուղման նպատակը (Աշխատանքային ո՞ր խնդրի լուծման համար էր նախատեսված գործուղումը)

Մասնակցություն համաշխարհային կրթական ֆորումին,

Փոխըմբռնման հուշագրի ստորագրում

6. Քննարկված թեմաները

- ՀՀ կրթական բարեփոխումների ծրագրեր (ուսուցիչների որակավորման բարձրացման բաղադրիչ)
- Կրթական համակարգի մոնիթորինգի և գնահատման մեխանիզմներ
- Ուսուցիչների որակավորման բարձրացման համար հնարավոր աջակցության տրամադրում
- ԿԶՆԱԿ հիմնադրամի հետ համագործակցության հնարավորություններ

7. Հանդիպումները, ելույթները, բարձրացված կամ քննարկված հարցերը

Մեծ Բրիտանիայում՝ ՀՀ դեսպանատանը, հանդիպում է տեղի ունեցել Արևելյան Եվրոպայի և Կենտրոնական Ասիայի դեպարտամենտի գործադիր տնօրեն Ջասթին Մըք Քենզի Սմիթի, Օտարերկրյա համագործակցության և զարգացման հայաստանյան գրասենյակի ներկայացուցիչ Ռեբեկա Էտկինսոնի հետ: Հանդիպման ընթացքում քննարկվել են կրթության ոլորտի առաջնահերթությունները, հնարավոր համագործակցության եղանակները ու մշակութային ժառանգությանն առնչվող հարցեր: Հանդիպմանը մասնակցել է նաև Բրիտանական խորհրդի հայաստանյան մասնաճյուղի տնօրեն Ադդեհ Հովասափյանը:

Լոնդոնի համալսարանական քոլեջի կրթության ինստիտուտում հանդիպում է տեղի ունեցել պրոֆեսորադասախոսական կազմի և միջազգային համագործակցության ոլորտի ներկայացուցիչների հետ և քննարկվել է կրթության բարեփոխման հնարավորությունները:

Տեղի է ունեցել այցելություն Դարթֆորդի դպրոց: Շրջայցի ընթացքում ԿԳՄՍ փոխնախարարը դպրոցի տնօրենի և աշխատակազմի հետ քննարկել է դպրոցի ներքին վերահսկողության համակարգի, կառավարման մոդելների, ինչպես նաև ուսուցիչների վերապատրաստման և խրախուսման համակարգերին վերաբերող մի շարք հարցեր:

Կրթական ֆորումի շրջանակում հանդիպում է տեղի ունեցել նաև Մեծ Բրիտանիայի և Հյուսիսային Իռլանդիայի Միացյալ Թագավորության Բարձրագույն կրթության որակի ապահովման կենտրոնի գործադիր տնօրեն Ալասթեր Դելեյնիի, Ֆինլանդիայի կրթության նախարար Լի Անդերսենի հետ: Հանդիպումների ընթացքում քննարկվել են երկկողմ համագործակցության հեռանկարներին առնչվող հարցեր:

8. Հանդիպման կամ հավաքի ժամանակ ընդունված որոշումները, պայմանավորվածությունները, ստորագրված փաստաթղթերը:

Հանդիպման ընթացքում ՀՀ ԿԳՄՍ նախարար Վահրամ Դումանյանը և Բրիտանական խորհրդի գլխավոր տնօրեն Սքոթ Մաքդոնալդը ստորագրել են փոխըմբռնման հուշագիր, որի նպատակն է ամրապնդել Բրիտանական խորհրդի «Անգլերենի ծրագրի» շրջանակում իրականացվող համագործակցությունը: Նոր հուշագրով աջակցություն է ցուցաբերվելու Բրիտանական խորհրդի կողմից մշակված «Հայաստանի Հանրապետության պետական դպրոցներում շարունակական մասնագիտական զարգացման քաղաքականությունը և շրջանակը» փաստաթղթի գործարկմանը: Այդ գործընթացում ներառվելու է անգլերենի 1000 ուսուցիչ, և փորձարկվելու է Շարունակական մասնագիտական զարգացման (ՇՄԶ) շրջանակը: Հուշագրով նախատեսվում են Հայաստանի Հանրապետության պետական

դպրոցներում անգլերենի ուսուցիչների համար նաև առցանց ՇՄՋ ծրագրերի իրականացումն ու ներդնումն ուսուցիչների համայնքի առցանց հարթակի միջոցով:

10. Սպորտագրությունը, ամսաթիվը

31,05,2022

Վահրամ Դումանյան

Ժաննա Անդրեասյան

5/31/2022

X

ԱՆԴՐԵԱՍՅԱՆ ԺԱՆՆԱ

Signed by: ANDREASYAN ZHANNA 6402810169